ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5-Ա « 04 » հունվարի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ՖՈՏՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.12.2022 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/3-5» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները: Ընկերությունը, խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, մասնակի է մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 համաձայնագրի 1.6 կետի համաձայն պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մանկապարտեզները էլեկտրոնային փոստի, ինչպես նաև հեռախոսազանգերի միջոցով բազմիցս դիմել են Ընկերությանը՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն Ընկերության կողմից չեն մատակարարվել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7.1. կետի բ) ենթակետի պահանջով՝ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 26.12.2023 թվականին հրապարակվել է տեղեկագրում և Պայմանագիրը 27.12.2023թ. դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246